

Վարկեր և ֆինանսավորում ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը

Առևտրավարկային ֆինանսական ծառայությունների դիմելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

- Ընկերության ֆինանսական հաշվետվությունները՝ առնվազն նախորդ երկու տարվա համար
- Ընկերության գործարար ծրագրի ստանդարտացված փաթեթը
- Դրամական հոսքերի կանխատեսման ձևը

Վարկի հաստատումից հետո, հաճախորդը պետք է Բանկին տրամադրի մի շարք փաստաթղթեր վարկային և գրավի պայմանագրերի պատրաստման համար:

Հիմնական փաստաթղթերի ցուցակը ներկայացված է ստորև: Սակայն անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը հաճախորդներին կներկայացվի անհատապես, քանի որ կախված տրամադրվող վարկային ծառայության տեսակից այն կարող է տարբերվել:

- Ընկերության կանոնադրության վերջին օրինակը,
- Պետական գրանցման վկայականը,
- Պետական գրանցման վկայականի ներդիրը՝ ընկերության տնօրենների տվյալներով,
- Ընկերության կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ Պետական Ռեգիստրից ստացված տեղեկանքը, տնօրենի և մասնակիցների վերաբերյալ տվյալները (Սահմանափակ պատասխանատվության ընկերությունների դեպքում): Բաժնետիրական ընկերությունների դեպքում ներկա բաժնետերերի ցանկը և մասնակիցների կառուցվածքը պետք է ստացվեն Կենտրոնական ղեկավարության կամ Ընկերության Ռեեստրից,
- Ընկերության տնօրենի և մասնակիցների (ՍՊԸների դեպքում) անձնագրերի բնօրինակները, և այն բաժնետերերի (բաժնետիրական ընկերությունների դեպքում) անձնագրերի բնօրինակները, որոնք ըստ Կանոնադրության հաղիսանում են բաժնետոմսերի վերահսկող փաթեթի սեփականատերերը,
- Ժողովի արձանագրությունը, որով Ընկերության տնօրենը լիազորվում է ստորագրել Վարկի /Գրավի պայմանագրեր Ընկերության անունից,
- Անհատ ձեռնարկատիրոջ անձնագրի օրինակը
- Գրավադրվող անշարժ գույքի(գույքերի) սեփականության իրավունքի վկայականը(ները), ձեռքբերման հիմքերը (պատճենները),
- Սեփականատերերի անձնագրերի պատճենները (ամուսնացած լինելու դեպքում նաև՝ ամուսնության վկայականի),
- Գրավի առարկայի հետ առնչվող այլ փաստաթղթեր - գրավադրվող սարքավորումների հաշիվ-ապրանքագիրը (invoice), առքուվաճառքի պայմանագիրը, տրանսպորտային միջոցի տեխնիկական անձնագրի պատճեն և այլն,
- Հարկային տեղեկանք կազմակերպության հարկային պարտավորությունների վերաբերյալ,
- Վերջին Հաշվապահական Հաշվեկշիռ (ձև 1-ի պատճեն) և/կամ գրություն ընկերության տնօրենի և գլխավոր հաշվապահի ստորագրությամբ և կնիքով վերջին եռամսյակում գրանցված ակտիվների վերաբերյալ
- Միասնական տեղեկանք(ներ) կադաստրի համապատասխան ստորաբաժանումից՝ գրավադրվող անշարժ գույքի(գույքերի) սահմանափակումների վերաբերյալ (Միասնական տեղեկանքը ունի վավերության ժամկետ՝ 15 օրացուցային օր):